



**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ N 09(150) 30.10.2017թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
	ԼՂՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
69	«Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 53-Ն որոշումը.....	3
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
	ԼՂՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ	
70	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների 2017-2018 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի N 280-Ն հրամանը.....	19
71	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2014 թվականի մայիսի 12-ի N 9-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ֆինանսների նախարարի N 351-Ն հրամանը	38
ՀԱՏՈՒԿ ԲԱԺԻՆ		
	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից լիցենզիաներ տրամադրելու, ուժը կորցրած ճանաչելու, փոփոխություն կատարելու և գործողության ժամկետը երկարաձգելու մասին որոշումների պատճենները.....	39

	<p>Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից տրված լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանի պատճենը.....</p>	46
	<p>Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության կողմից սեպտեմբեր ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ.....</p>	47
	<p>Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից սեպտեմբեր ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ.....</p>	48

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2017 թվականի հոկտեմբերի 30-ին
պետական գրանցման համարը 3031768

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» հոկտեմբերի 2017 թվականի

N 53-Ն

ք. Ստեփանակերտ

**ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԹԻՎ 57Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը և «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 57Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է էներգետիկայի բնագավառում սույն կարգի 2-րդ կետով սահմանված գործունեության տեսակների իրականացման համար լիցենզիայի հայտի ընդունման, քննարկման, լիցենզիայի տրման (մերժման) և լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման ընթացակարգերը:

2. Լիցենզիան տրվում է միայն իրավաբանական անձին (այսուհետ՝ Անձ), գործունեության հետևյալ տեսակներն իրականացնելու համար.

1) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրություն (ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրություն).

2) էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդում.

3) էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխում.

4) ջերմային էներգիայի արտադրություն.

5) ջերմային էներգիայի փոխադրում.

6) ջերմային էներգիայի բաշխում.

7) բնական գազի փոխադրում.

8) բնական գազի բաշխում.

9) էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցում.

10) գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցում.

11) էներգետիկական շուկային ծառայությունների մատուցում:

3. Մինչև 1 մեգավատտ տեղակայված հզորությամբ արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա չի տրամադրվում, և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 26-ի N 18-Ն որոշմամբ սահմանված մեթոդիկայի համաձայն սակագին չի սահմանվում, եթե այդ կայաններում՝ արդեն իսկ տրամադրված էլեկտրական էներգիայի արտադրության բոլոր լիցենզիաներով ամրագրված էլեկտրակայանների տեղակայված (տեղակայվող) հզորությունների ընդհանուր գումարը գերազանցում է 10 մեգավատտը, բացառությամբ բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի արտադրության գործունեության:

4. Սույն կարգի 3-րդ կետում նշված արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու մեկից ավելի հայտերի ներկայացման դեպքում, որոնց բավարարումը կհանգեցնի նույն ենթակետով ամրագրված 10 մեգավատտ ընդհանուր հզորության գերազանցման, հայտերը քննարկվում են ըստ ներկայացման հաջորդականության:

5. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու իրավունք ունեցող Անձինք կարող են զբաղվել այդ գործունեությամբ լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից և լիցենզիայի գործողության ժամկետում:

6. Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

7. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող Անձանց վրա:

8. Լիցենզիայի անբաժանելի մասն են համարվում լիցենզիայի պայմանները:

9. Կարգավորման ենթակա չեն՝

1) բացառապես սեփական կարիքների համար ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները.

2) ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները, եթե այդ համակարգերի դրվածքային հզորությունը չի գերազանցում 5,8 մեգավատտը.

3) մինչև 150 կիլովատտ (ներառյալ) հզորությամբ արևային էլեկտրակայանների արտադրության գործունեությունը՝ կառուցման ժամանակահատվածում.

4) բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության, ինչպես նաև դիզել-գեներատորային կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը.

5) բացառապես սեփական կարիքների համար, ինչպես նաև մինչև 150 կիլովատտ դրվածքային հզորությամբ ինքնավար արտադրողների կողմից էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը՝ արտադրության ժամանակահատվածում:

10. Լիցենզիայի գործողության ժամկետը (ժամանակահատվածը) և գործունեության իրականացման աշխարհագրական տարածքը սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշմամբ և ամրագրվում լիցենզիայում:

11. Լիցենզիայի տրման (ժամանակահատվածի ամրագրման), լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզիայի կրկնօրինակի տրման համար գանձվում է պետական տուրք՝ օրենքով սահմանված կարգով և չափով: Հայտատուի (լիցենզավորված անձի) կողմից պետական տուրքի վճարման և օրենքով սահմանված ժամկետում այն չվճարելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով:

12. Սույն կարգով նախատեսված իրազեկումը, այդ թվում փաստաթղթերի հանձնումը, կատարվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

2. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՅՏԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

13. Հայտատուի ներկայացրած հայտը մուտքագրվում է Հանձնաժողովում: Հայտը պետք է լրացված լինի համաձայն սույն կարգի N 1 հավելվածի և պարունակի սույն կարգի N 2 հավելվածով սահմանված փաստաթղթերը:

14. Հայտատուն, օրենքով սահմանված կարգով, պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:

15. Հայտը և նրանում ընդգրկված փաստաթղթերը պետք է համապատասխանեն Արցախի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կարգով սահմանված պահանջներին:

16. Հանձնաժողովի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումները ստուգում են հայտի ամբողջականությունը, նրանում ընդգրկված փաստաթղթերի ձևակերպման ճշտությունը և համապատասխանությունը սույն կարգի NN 1-5 հավելվածներին՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում:

17. Հայտում ոչ էական թերությունների (վրիպակների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերի թերի լինելու դեպքում Հանձնաժողովը

դրանք հայտնաբերելու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև սույն կարգի 16-րդ կետում նշված ժամկետի ավարտը, գրավոր առաջարկում է հայտատուին հինգ աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները, որի դեպքում նշված կետով սահմանված ժամկետը երկարաձգվում է մինչև հայտատուի կողմից համապատասխան թերությունների վերացումը, բայց ոչ ուշ, քան մինչև դրա համար սահմանված ժամկետի ավարտը:

18. Հայտը չի ընդունվում ուսումնասիրության, եթե՝

1) հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են և հայտատուն սույն կարգի 17-րդ կետով սահմանված ժամկետում չի վերացրել թերությունները.

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կարգով սահմանված պահանջներին.

3) հայտատուն օրենքի, այլ իրավական ակտերի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով.

4) լիցենզիա տալու դեպքում սահմանափակվում է մեկ այլ լիցենզավորված անձին տրված իրավունքը.

5) լիցենզավորված գործունեության իրականացումը կհանգեցնի էներգետիկայի բնագավառի հուսալիության և անվտանգության խաթարման կամ Արցախի Հանրապետության բնական պաշարների անարդյունավետ օգտագործման կամ չի համապատասխանի Արցախի Հանրապետության էներգետիկայի զարգացման հեռանկարային ծրագրերին:

19. Հանձնաժողովը հայտի ուսումնասիրության բացասական արդյունքի մասին իրազեկում է հայտատուին՝ հայտն ստանալու օրվանից ոչ ուշ, քան տասն աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն կարգի 17-րդ կետով նախատեսված դեպքի: Հայտի ուսումնասիրության բացասական արդյունքի դեպքում հայտը պահպանվում է Հանձնաժողովում:

20. Հայտատուն, Հանձնաժողովի կողմից հայտի ուսումնասիրության բացասական արդյունքի պատճառները վերացնելուց հետո, հայտը մուտքագրում է Հանձնաժողով: Այդ դեպքում հայտատուն և Հանձնաժողովն առաջնորդվում են սույն կարգի 16-19-րդ կետերով սահմանված պահանջներով և ժամկետներով:

21. Հայտի ստուգման դրական արդյունքի դեպքում Հանձնաժողովն սկսում է այն քննարկելու գործընթացը և կայացնում համապատասխան որոշում՝ հայտի մուտքագրման օրվանից 80 աշխատանքային օրվա ընթացքում (փոքր հիդրոէլեկտրակայանների և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայանների դեպքում՝ 25 աշխատանքային օրվա ընթացքում):

22. Հանձնաժողովը հայտը մերժում է, եթե՝

1) հայտատուի ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկությունները չեն համապատասխանում օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջներին.

2) լիցենզիա տալու դեպքում սահմանափակվում է մեկ այլ լիցենզավորված անձին տրված իրավունքը.

3) լիցենզավորվող գործունեության իրականացումը կհանգեցնի էներգետիկայի բնագավառի հուսալիության և անվտանգության խաթարման կամ Արցախի Հանրապետության բնական պաշարների անարդյունավետ օգտագործման կամ չի համապատասխանի Արցախի Հանրապետության էներգետիկայի զարգացման հեռանկարային ծրագրերին.

4) հայտատուն օրենքի, այլ իրավական ակտերի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով, կամ գտնվում է սնանկության կամ լուծարման գործընթացում:

23. Հայտի մերժման մասին Հանձնաժողովի որոշումը չի կարող ազդեցություն ունենալ Անձի՝ հաջորդ հայտերի քննարկման վրա:

24. Հանձնաժողովը լիցենզիայի տրման կամ հայտի մերժման մասին որոշման պատճենը որոշումն ընդունելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ուղարկում է հայտատուին:

25. Լիցենզիա տրամադրելու մասին որոշում ընդունելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Հանձնաժողովը լիցենզիան՝ մեկ օրինակից, հանձնում է լիցենզավորված անձին, իսկ նրա չներկայանալու դեպքում՝ լիցենզիան պահվում է Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումում՝ մինչև լիցենզավորված անձի ներկայանալը: Լիցենզիա ստացած անձի ստորագրությամբ լիցենզիայի ստացման կտրոնը (հավելված N6) պահվում է Հանձնաժողովում:

26. Հանձնաժողովում յուրաքանչյուր լիցենզավորված անձի համար վարվում է հաշվառման գործավարություն և կազմվում անհատական գործ: Լիցենզիայի գործողությունը դադարեցվելու դեպքում անհատական գործը պահվում է Հանձնաժողովում օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

27. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության (ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության), ջերմային էներգիայի արտադրության լիցենզիա (այսուհետ՝ Արտադրության լիցենզիա) ունեցող անձը պարտավոր է մինչև լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ և լիցենզիայում փոփոխություններ կատարելու համար դիմել Հանձնաժողով՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտի և ավարտական ակտի (շահագործման թույլտվության), Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ ինքնակամ կառույցների օրինականացման, անհրաժեշտության դեպքում նաև տնօրինման մասին որոշումների պատճենները.

2) կայանի (ջենքի, իսկ հիդրոէլեկտրակայանների դեպքում նաև գլխամասային հանգույցի) նկատմամբ իրավունքների պետական գրանցումը հավաստող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները), եթե Արցախի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվում է նշված իրավունքների պետական գրանցում, իսկ Արցախի Հանրապետության օրենսդրության համաձայն նշված իրավունքների պետական գրանցում չպահանջվելու դեպքում՝ իրավասու մարմնի կողմից տրված համապատասխան հիմնավորումներ.

3) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ էներգատեղակայանքի գործարկման եզրակացության պատճենը.

4) կայանում տեղակայված ագրեգատների վերաբերյալ տեղեկանք, որը կներառի տեղեկություններ ագրեգատների, մակնիշի, հզորության, արտադրության տարեթվի վերաբերյալ՝ կցելով անհրաժեշտ հիմնավորումներ.

5) Էլեկտրական էներգիայի (հզորության) կամ ջերմային էներգիայի վաճառքի սակագնի սահմանման հայտ, բացառությամբ սույն կարգի 9-րդ կետով նախատեսված դեպքերի:

28. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձանց կողմից կայանի կարգաբերման-գործարկման աշխատանքներն իրականացվում են Հանձնաժողովի սահմանած օրինակելի ձևին համապատասխան կնքված և Հանձնաժողովում գրանցված պայմանագրի հիման վրա:

29. Սույն կարգի 27-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացնելուց հետո Հանձնաժողովը սույն կարգի 21-րդ կետով սահմանված ժամկետում կայացնում է կայանի փաստացի տեղակայված հզորությունն ու կայանում տեղակայված ագրեգատների տվյալները Արտադրության լիցենզիայում ամրագրելու վերաբերյալ որոշում՝ անհրաժեշտության դեպքում ճշգրտելով Արտադրության լիցենզիայով ամրագրված ժամանակահատվածը (ժամանակահատվածները), կամ գրավոր մերժում է դիմումը՝ սույն կարգի 22-րդ կետով սահմանված հիմքերով:

30. Կայանի վերակառուցման այն դեպքերում, որոնց ընթացքում կատարվելու են Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն պահանջող աշխատանքներ, և որոնք հանգեցնելու են կայանի՝ լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորության փոփոխության, Արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայի պայմաններում վերակառուցման ժամանակահատված ամրագրելու համար դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, ինչպես նաև էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից էլեկտրական ցանցին պահանջվող հզորությամբ միանալու նախնական տեխնիկական պայմաններ, որը կներառի էլեկտրական ցանցին միացման կետի վերաբերյալ տեղեկատվություն.

2) Կայանի հաշվարկային հզորության ավելացման դեպքում՝ ավելացող հաշվարկային հզորության չափով երաշխիք համաձայն սույն կարգի N 3 հավելվածի.

3) լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ հողի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթերը և համապատասխան որակավորում ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագծի պատճենը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ իրավասու մարմնի կողմից տրված հատակագծի պատճենը.

4) հիդրոէլեկտրակայանի վերակառուցման դեպքում՝ Արտադրության լիցենզիայով ամրագրված հաշվարկային ելքի և (կամ) ջրառի և ջրօգտագործման նիշերի փոփոխության դեպքում՝ ջրօգտագործման թույլտվություն:

31. Հանձնաժողովը սույն կարգի 21-րդ կետով սահմանված ժամկետում կայացնում է Արտադրության լիցենզիայի պայմաններում վերակառուցման ժամանակահատված ամրագրելու վերաբերյալ որոշում, կամ գրավոր մերժում է դիմումը՝ սույն կարգի 22-րդ կետով սահմանված հիմքերով:

32. Արտադրության լիցենզիա ունեցող անձինք պարտավոր են մինչև լիցենզիայով սահմանված վերակառուցման ժամանակահատվածի ավարտը լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար դիմել Հանձնաժողով՝ ներկայացնելով սույն կարգի 27-րդ կետի 1-4-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև սակագնի սահմանման հայտ:

33. Սույն կարգի 32-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացնելուց հետո Հանձնաժողովը որոշում է ընդունում Արտադրության լիցենզիայում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ անհրաժեշտության դեպքում ճշգրտելով վերակառուցման ժամանակահատվածը, կամ գրավոր մերժում է դիմումը՝ սույն կարգի 22-րդ կետով սահմանված հիմքերով:

3. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ (ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ) ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄԸ

34. Լիցենզիայում ամրագրված ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման համար լիցենզավորված անձը լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս, և ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր առաջ, հայտով դիմում է Հանձնաժողով՝ նշելով հայցվող ժամկետը:

35. Հայտն իր մեջ պետք է պարունակի՝

1) լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ լիցենզավորված անձի հիմնավորումները, իսկ կառուցման ժամանակահատվածի երկարաձգման դեպքում՝ կառուցման ժամանակահատվածի համար իրականացված աշխատանքների մասին տեղեկություններ, որտեղ պետք է նշվեն նաև աշխատանքների չիրականացման պատճառները և դրանց իրականացման համար անհրաժեշտ ժամկետը՝ համապատասխան հիմնավորումներով:

36. Հանձնաժողովը որոշում է ընդունում լիցենզիայի գործողության ժամկետը (ժամանակահատվածը) երկարաձգելու կամ հայտը մերժելու մասին հայտի մուտքագրման օրվանից 25 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) ավարտը:

37. Հանձնաժողովը հայտը մերժում է, եթե՝

1) հայտատուի ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկությունները թերի են կամ չեն համապատասխանում օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջներին.

2) լիցենզավորվող գործունեության իրականացումը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել էներգետիկայի բնագավառի հուսալիության և անվտանգության խաթարման կամ Արցախի Հանրապետության բնական պաշարների անարդյունավետ օգտագործման.

3) հայտատուն օրենքի, այլ իրավական ակտերի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով.

4) լիցենզիան ստանալուց հետո անցած ժամանակաընթացքում փոփոխվել են լիցենզավորման պայմանները:

38. Եթե լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման հայտը ներկայացվել է լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածում, ապա այդ ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման հարցը քննարկվում է միայն կասեցումը վերացվելուց հետո:

39. Արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը կարող է երկարաձգվել նախկինում սահմանված կառուցման ժամանակահատվածից ոչ ավելի:

4. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՑՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԼԻՑԵՆԶԻԱՑԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ՂԱՂԱՐԵՑՈՒՄԸ

40. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել ինչպես լիցենզավորված անձի, այնպես էլ Հանձնաժողովի նախաձեռնությամբ:

41. Լիցենզավորված անձը լիցենզիայում փոփոխություններ կատարելու համար դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով առաջարկվող փոփոխությունների անհրաժեշտությունը և դրանք հիմնավորող փաստաթղթերը:

42. Հանձնաժողովը, սույն կարգի 21-րդ կետով սահմանված ժամկետում կայացնում է լիցենզավորված անձի լիցենզիայի պայմաններում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին համապատասխան որոշում կամ գրավոր մերժում է դիմումը՝ սույն կարգի 22-րդ կետով սահմանված հիմքերով:

43. Հանձնաժողովի նախաձեռնությամբ լիցենզիայում փոփոխություններ կատարվում են լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են Արցախի Հանրապետության օրենքների պատշաճ կատարումն ապահովելու համար:

44. Հանձնաժողովի նախաձեռնությամբ լիցենզիայում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը պատշաճ ձևով այդ մասին տեղեկացնում է լիցենզավորված անձին՝ հիմնավորելով փոփոխությունների անհրաժեշտությունը:

45. Լիցենզավորված անձն իր դիրքորոշումը Հանձնաժողովին հայտնում է Հանձնաժողովի սահմանած ժամկետում՝ անհամաձայնության դեպքում ներկայացնելով իր հիմնավորումները:

46. Լիցենզիայի գործողության կասեցումը կամ դադարեցումն իրականացվում է «էներգետիկայի մասին» և «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով:

47. Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի՝ տվյալ կայանի համար տրամադրված ջրօգտագործման թույլտվությունը կասեցվելու դեպքում լիցենզիայի գործողությունը կասեցվում է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կամ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ մարմնի օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա:

48. Լիցենզիայի գործողությունը դադարեցվում է նաև հետևյալ դեպքերում.

1) Արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները, չի դիմել լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար կամ Հանձնաժողովը մերժել է փոփոխություններ կատարելու դիմումը, և Արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև կառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել մերժման հիմքերը և Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր.

2) Արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները, չի դիմել լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով կամ Հանձնաժողովը մերժել է ներկայացված հայտը, և Արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև կառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել մերժման հիմքերը և Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր.

3) Արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածում Հանձնաժողովը կասեցրել է Արտադրության լիցենզիան, և Արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածի ավարտը չի վերացրել Արտադրության լիցենզիայի կասեցման համար հիմք հանդիսացած խախտումը, Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր, և Հանձնաժողովը չի վերացրել Արտադրության լիցենզիայի կասեցումը.

4) Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի՝ տվյալ կայանի համար տրամադրված ջրօգտագործման թույլտվությունը ուժը կորցրած ճանաչվելու կամ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կամ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ մարմնի օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա:

49. Ի լրումն «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ լիցենզիայի գործողության կասեցման դեպքերի՝ լիցենզիայի գործողության կասեցման վերաբերյալ դիմումը Հանձնաժողովը կարող է մերժել նաև, եթե կասեցումը կարող է հանգեցնել Արցախի Հանրապետության բնական պաշարների անարդյունավետ օգտագործման կամ էներգետիկայի բնագավառում հուսալիության և անվտանգության խաթարման:

5. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՎԵՐԱԶԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

50. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման, կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում լիցենզիայի վերաձևակերպման համար հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ կցելով տեղեկություններ պետական գրանցման համարի (պետական հաշվառման համարի) վերաբերյալ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

51. Հայտերը բավարարվում կամ մերժվում են Հանձնաժողովի կողմից ոչ ուշ, քան հայտն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

52. Հայտը մերժվում է, եթե՝

- 1) հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են.
- 2) հայտատուն օրենքի, այլ իրավական ակտերի կամ իր կանոնադրության համաձայն զրկվել է հայցվող գործունեության տեսակով զբաղվելու իրավունքից:

6. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

53. Մինչև սույն կարգի ուժի մեջ մտնելը արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման լիցենզիաներ ստացած անձանց նկատմամբ կիրառվում են արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածում գտնվող անձանց համար սահմանված դրույթները:

54. Մինչև սույն կարգի ուժի մեջ մտնելը արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման լիցենզիաներ ստացած անձանց կողմից սույն կարգի պահանջներին համապատասխան արտադրության լիցենզիա ստանալու հայտ ներկայացնելու դեպքում լիցենզավորված անձին տրամադրվում է էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա՝ ամրագրելով միայն արտադրության ժամանակահատված:

Հավելված N 1

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2017 թվականի հոկտեմբերի 25-ի N 53-Ն
որոշմամբ հաստատված կարգի

Հ Ա Յ Ց

ԼԻՑԵՆԶԻԱ ՄՏԱՆԱԼՈՒ ՄԱՄԻՆ

1. Խնդրում եմ տալ լիցենզիա _____

(աշխարհագրական տարածքը, շրջանը, վարչական տարածքը)

2. Իրավաբանական անձի անվանումը _____

3. Գտնվելու վայրը _____

4. Հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն _____

5. Պետական գրանցման համարը _____

6. Գործունեության տեսակը _____

7. Լիցենզիայի հայցվող ժամկետը _____

8. Կից ներկայացվում է՝

- 1) _____
- 2) _____
- 3) _____
- 4) _____
- 5) _____

9. Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ՝

_____, _____ 201__ թվական
(տնօրենի անուն, հայրանուն, ազգանուն)

Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2017 թվականի հոկտեմբերի 25-ի N 53-Ն
որոշմամբ հաստատված կարգի

Ց Ա Ն Կ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրություն (ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրություն) կամ ջերմային էներգիայի արտադրություն՝

1) գործարար ծրագիր՝ համաձայն սույն կարգի N 4 հավելվածի.

2) լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ հողի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթեր և համապատասխան որակավորում ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ իրավասու մարմնի կողմից տրված հատակագծի պատճենը.

3) նախագծային կազմակերպության հետ կնքված պայմանագիր նախագծային-նախահաշվային աշխատանքներ կատարելու վերաբերյալ և դրանց կատարման ժամանակացույց.

4) հայտարարություն մամուլում՝ Արցախի Հանրապետությունում ամենամեծ տպաքանակ ունեցող թերթում՝ համաձայն սույն կարգի N 5 հավելվածի.

5) երաշխիքներ՝ համաձայն սույն կարգի N 3 հավելվածի.

6) ջրօգտագործման թույլտվություն՝ հիդրոէլեկտրակայաններում, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համար.

7) այլ անձի (անձանց) պատկանող հիդրոկառույցը օգտագործելու (հիդրոկառույցից օգտվելու) վերաբերյալ պայմանագիր կամ հիդրոկառույցին միացման թույլտվություն՝ միայն խմելու ջրատարների կամ ռոռզման համակարգերի վրա կառուցվող հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության համար.

8) Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից էլեկտրական ցանցին պահանջվող հզորությամբ միանալու նախնական տեխնիկական պայմաններ, որը կներառի էլեկտրական ցանցին միացման կետի վերաբերյալ տեղեկատվություն:

2. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրություն (ներառյալ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրություն) կամ ջերմային էներգիայի արտադրություն՝ միայն արտադրության ժամանակահատվածի համար՝

1) կառուցված (վերակառուցված) կայանի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը հավաստող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները):

2) կայանում տեղակայված ագրեգատների վերաբերյալ տեղեկանք, որը կներառի տեղեկություններ ագրեգատների, մակնիշի, հզորության, արտադրության տարեթվի վերաբերյալ կցելով անհրաժեշտ հիմնավորումներ:

3) ջրօգտագործման թույլտվություն՝ հիդրոէլեկտրակայաններում, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության համար:

4) այլ անձի (անձանց) պատկանող հիդրոկառույցը օգտագործելու (հիդրոկառույցից օգտվելու) վերաբերյալ պայմանագիր կամ հիդրոկառույցին միացման թույլտվություն՝ միայն խմելու ջրատարների կամ ոռոգման համակարգերի վրա կառուցված հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության համար:

3. Էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդում կամ բաշխում, ջերմային էներգիայի փոխադրում կամ բաշխում, բնական գազի փոխադրում կամ բաշխում՝

1) գործարար ծրագիր:

2) լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ հողի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթեր:

3) նախագծային կազմակերպության հետ կնքված պայմանագիր նախագծային-նախահաշվային աշխատանքներ կատարելու վերաբերյալ և դրանց կատարման ժամանակացույց:

4) հայտարարություն մամուլում՝ Արցախի Հանրապետությունում ամենամեծ տպաքանակ ունեցող թերթում՝ համաձայն սույն կարգի N 5 հավելվածի:

4. Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցում, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցում և էներգետիկական շուկային ծառայությունների մատուցում՝

1) լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ հիմնական և վարձակալած միջոցների ցանկը:

Հավելված N 3

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2017 թվականի հոկտեմբերի 25-ի N 53-Ն
որոշմամբ հաստատված կարգի

Կ Ա Ր Գ

ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կառուցման ժամանակահատված ներառող Արտադրության լիցենզիա ստանալու, կամ Արտադրության լիցենզիայում վերակառուցման ժամանակահատված ամրագրելու, ինչպես նաև նշված ժամանակահատվածները երկարաձգելու

նպատակով Անձը Հանձնաժողով է ներկայացնում Արցախի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետությունում գործող որևէ բանկի կողմից տրամադրված երաշխիք, որով բանկը գրավոր պարտավորություն է ստանձնում Անձի կողմից լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում սույն կարգի 3-րդ կետի համաձայն հաշվարկված գումարը, Հանձնաժողովի որոշման կամ գրության հիման վրա, Հանձնաժողովի սահմանած ժամկետում, անվիճելի և անառարկելի կարգով փոխանցելու Արցախի Հանրապետության պետական բյուջե:

2. Անձը պարտավոր է երաշխիքը ներկայացնել Արտադրության լիցենզիայի կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածի համար իր կողմից հայցվող, իսկ ժամկանահատվածի երկարաձգման դեպքում՝ երկարաձգման ժամկետից առնվազն 45 օր ավելի գործողության ժամկետով:

3. Երաշխիքով սահմանված գումարի հաշվարկման բազա է սահմանվում «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված բազային տուրքի չափը: Երաշխիքով սահմանված գումարի մեծությունը պետք է հավասար լինի կառուցվող կայանի հաշվարկային հզորության (արտահայտված կիլովատտերով) և «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված բազային տուրքի երկուսուկեսապատիկի արտադրյալին, սակայն ոչ պակաս, քան 500 000 ՀՀ դրամը: Էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանի դեպքում կայանի հաշվարկային հզորությունը հաշվարկվում է որպես էլեկտրական և ջերմային հաշվարկային հզորությունների գումար:

4. Սույն կարգով սահմանված երաշխիքը չի պահանջվում, եթե Անձը Հանձնաժողով է ներկայացրել Արցախի Հանրապետության կառավարության կողմից տրված բյուջետային երաշխիք:

5. Լիցենզիայի պայմանները սահմանված ժամկետում կամ վաղաժամկետ կատարելու դեպքում Հանձնաժողովը, լիցենզավորված անձի դիմումի համաձայն, համապատասխան որոշմամբ կամ գրությամբ երաշխիք տված անձին ազատում է երաշխիքային պարտավորություններից:

2. ԵՐԱՇԽԻՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈՒՄԱՆՑԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ

6. Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարն ամբողջությամբ Արցախի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե՝

1) Հանձնաժողովը որոշում է ընդունել լիցենզավորված անձի լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին.

2) Արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված վերակառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի վերակառուցման աշխատանքները և չի դիմել լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար կամ Հանձնաժողովը մերժել է փոփոխություններ կատարելու դիմումը, և Արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև վերակառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել մերժման հիմքերը և Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

3) Արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված վերակառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի վերակառուցման աշխատանքները և չի դիմել լիցենզիայով սահմանված վերակառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով կամ Հանձնաժողովը մերժել է ներկայացված հայտը, և Արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև վերակառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել մերժման հիմքերը և Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

7. Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Արցախի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե՝

1) Հանձնաժողովը որոշում է ընդունել լիցենզավորված անձի լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին.

2) Լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետում Արտադրության լիցենզիա ունեցող անձը Հանձնաժողով չի ներկայացրել Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, և Հանձնաժողովը որոշում է ընդունել այդ նախագծի ներկայացման ժամկետը երկրորդ անգամ երկարաձգելու մասին:

8. Սույն կարգի 7-րդ կետում սահմանված դեպքերում՝ Հանձնաժողովի որոշմամբ կամ գրությամբ սահմանված ժամկետում, լիցենզավորված անձը Հանձնաժողով է ներկայացնում սույն կարգի 3-րդ կետին համապատասխան հաշվարկված երաշխիք:

9. Սույն կարգի 6-րդ կետով նախատեսված որոշման ընդունման դեպքում, երբ լիցենզավորված անձի կողմից նախկինում Հանձնաժողով երաշխիք չի ներկայացվել, սույն կարգի 6-րդ կետով նախատեսված գումարի՝ Արցախի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու պարտավորությունը կրում է լիցենզավորված անձը:

3. ՖՈՐՄ-ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

10. Լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը սույն կարգով սահմանված դեպքերում Արցախի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է արտակարգ և անկանխելի դեպքերի ու հանգամանքների, որոնք ստեղծվել են նրա կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, ինչպես նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են նրա գործունեությանը կամ հանգեցնում նրանց ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման հակառակ նրանց գործադրած ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

11. Լիցենզավորված անձը պարտավոր է սույն կարգի 10-րդ կետով սահմանված դեպքերում անհապաղ տեղեկացնել Հանձնաժողովին՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

Հավելված N 4
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2017 թվականի հոկտեմբերի 25-ի N 53-Ն
որոշմամբ հաստատված կարգի

Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ր Ծ Ր Ա Գ Ի Ր
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(կառուցման ժամանակահատվածի համար)
(փաստաթղթի կազմը և բովանդակությունը)

Կառուցվող օբյեկտի անվանումը

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Կառուցման նպատակը և սպասվող տնտեսական, սոցիալական և առևտրային արդյունքը:
2. Կառուցվող օբյեկտի ընդհանուր բնութագիրը և տեխնիկատնտեսական ամփոփ ցուցանիշները:
3. Տեղեկություններ շինմոնտաժային ծառայությունների շուկայի, հիմնական սարքավորումներ արտադրողների (առաքողների) և դրանց արժեքների մասին:
4. Տեղեկություններ տեղադրվող գեներատորների և տուրբինների մակնիշների և հզորության վերաբերյալ:

2. ՇՈՒԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

5. Արտադրանքի (ծառայության) իրացման հնարավորությունները:

3. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

6. Արտադրության (ծառայության) տեխնոլոգիայի և հիմնական տեխնոլոգիական սարքավորումների ընտրության տեխնիկական և տնտեսական հիմնավորումը:
7. Ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով օբյեկտի տեխնիկատնտեսական ցուցանիշների համալիր վերլուծության արդյունքներով օպտիմալ տարբերակի ընտրության հիմնավորումը:

4. ՕԲՅԵԿՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ (ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ) ՏԱՐԱԾՔԸ

8. Օբյեկտի տեղաբաշխման հիմնավորումը:
9. Քարտեզագրական և այլ նյութեր, այդ թվում՝ կառուցվող օբյեկտի տեղաբաշխման սխեման, որի վրա նշված են տրանսպորտային հաղորդակցության ուղիներին և ճարտարագիտական ցանցերին միացման կետերը, օբյեկտի հատակագիծը:

5. ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

10. Օբյեկտի շինությունների և կառույցների հիմնական բնութագրերը:
11. Կառուցման ժամանակացույցը՝ ըստ փուլերի:

12. Նախնական լուծումներ օբյեկտի էներգամատակարարման (սնման), ջրամատակարարման, կոյուղու և այլնի վերաբերյալ:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՕՔՅԵԿՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- 13. Օբյեկտի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:
- 14. Նախնական բնապահպանական լուծումներ:

7. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՑՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

- 15. Կառուցման աշխատանքների արժեքը բացված տեսքով:
- 16. Ֆինանսավորման հնարավոր աղբյուրները և ֆինանսավորման պայմանները:
- 17. Հիմնական արտադրանքի հնքնարժեքի հաշվարկը:
- 18. Օբյեկտի նախագծման, կառուցման և նախագծային հզորությամբ գործարկման ժամկետները:
- 19. Ներդրումների արդյունավետության գնահատման ցուցանիշների (շահութաբերության ներքին նորմա, մաքուր բերված արժեք, հետզման ժամկետ և այլն) հիման վրա կառուցվող օբյեկտի համար լավագույն տեխնիկատնտեսական ցուցանիշների ընտրություն:
- 20. Անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

Ընկերության անվանումը

Տնօրենի անունը, ազգանունը

Տնօրենի ստորագրությունը

_____ 201__ թվական

Հավելված N 5
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2017 թվականի հոկտեմբերի 25-ի N 53-Ն
որոշմամբ հաստատված կարգի

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

(Լիցենզավորվող անձի անվանումը)

դիմել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով՝

(լիցենզավորվող գործունեության տեսակը)

ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար:

(լիցենզավորվող անձի գտնվելու վայրը, հետախոսը, էլեկտրոնային փոստը)

Հավելված N 6

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի N 53-Ն որոշմամբ հաստատված կարգի

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ (ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ) ՍՏԱՑՄԱՆ ԿՏՐՈՆ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 20__ թվականի _____ «__»-ի N____ -Ա որոշում.

2. Լիցենզավորված գործունեության տեսակը` _____

3. Լիցենզիայի տրամադրման ամսաթիվը` «__» _____ 20__ թվական

4. Լիցենզիայի համարը` N _____

5. Ստացված էջերի քանակը` _____

6. Լիցենզավորված անձի անվանումը _____

7. Լիցենզիա ստացող անձի անունը, ազգանունը, անձնագրի կամ այն փոխարինող փաստաթղթի սերիան և համարը, ում կողմից և երբ է տրված` _____

8. Լիցենզիան ստացվել է` «__» _____ 20__ թվական

9. Լիցենզիա ստացողի ստորագրությունը` _____

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2017 թվականի սեպտեմբերի 29-ին
Պետական գրանցման համարը 1051766

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

«15» սեպտեմբերի 2017թ.

N 280-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ
ԱՐԿԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների 2017-2018 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի լիցենզավորման և իրավաբանական բաժնի վարիչ Ա.Ապրեյանին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն, պետական գրանցման:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի տեղակալ Մ.Համբարձումյանին:

Նախարարի պաշտոնակատար

Ս. ԱՄՐՅԱՆ

Հավելված
 Լեռնային Ղարաբաղի
 Հանրապետության կրթության,
 գիտության և սպորտի նախարարի
 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 280-Ն հրամանի

**ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ
 ԵՐԱԺՇՏԱԿԱՆԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ 2017-2018
 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ**

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցներում (այսուհետ՝ դպրոց) ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից:

Ուսումնական տարվա տևողությունը սահմանվում է 34-40 շաբաթ:

2. Աշնանային, ձմեռային և գարնանային արձակուրդները սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար սահմանված ժամանակացույցին համապատասխան:

3. Ելնելով մասնագիտական առանձնահատկություններից և շենքային պայմաններից՝ կարող է սահմանվել վեցօրյա ուսումնական շաբաթ:

4. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման հիմնական ձևերն են՝ անհատական և խմբային պարապմունքները դպրոցներում. անհատական դասի տևողությունը 45, խմբակայինը 40 րոպե է:

5. Դպրոցում գործում է սովորողների գնահատման տասը միավորային համակարգ:

6. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում է առաջին կիսամյակային, իսկ տարեվերջյան փոխադրական ստուգարքների ու քննությունների արդյունքով՝ երկրորդ կիսամյակային և տարեկան գնահատականները:

7. Յուրաքանչյուր օրինակելի ուսումնական պլանի «Աղյուսակը և պարզաբանումը» հատվածում ներկայացված է տվյալ մասնագիտության ուսուցման կազմակերպման գործընթացը:

Աղյուսակ 1

ԴԱՇՆԱՍՈՒՐ

(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)							Ստուգարք	Քննություն
		Դասարաններ								
		I	II	III	IV	V	VI	VII		
1.	Դաշնամուր	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	I, II, III, V, VI	IV, VII
2.	Սոլֆեջիո	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	II, III, IV, V, VI	VII
3.	Երաժշտական գրականություն	---	---	---	1.5	1.5	1.5	1.5	V, VI, VII	---
4.	Երգչախումբ	1.0	1.0	1.0	1.0	2.0	2.0	2.0	IV, V, VI, VII	---

	կամ համույթ									
5.	Ընտրովի	---	0.5	1.0	1.0	1.0	1.0	1.0	IV, VII	---
	Ընդամենը	4.5	5.0	5.5	7.0	8.0	8.0	8.0		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1, 2, 3, 4-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է VII դասարանի տարեվերջի ստուգաքննարկի և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է VII դասարանի ստուգաքննարկի և քննությունները հանձնած սովորողներին:

2. «Դաշնամուր» և «Ընտրովի» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «Սոլֆեջիո», «Երաժշտական գրականություն» և «Երգչախումբ կամ համույթ» առարկաներինը՝ խմբային:

3. «Ընտրովի» առարկաներն են՝ թերթից ընթերցում, նվազակցություն, համույթ (անսամբլ), կոմպոզիցիա և այլն: Ընտրովի առարկայի դասաժամի 0,5 ժամը II-VII դասարաններում նպատակահարմար է տրամադրել թերթից ընթերցմանը, իսկ մյուս 0,5 ժամը՝ դասարաններում դաշնամուրի համույթին (անսամբլ), V-VII դասարաններում՝ նվազակցության ուսուցմանը:

4. Խմբային պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում՝ փոքր համակազմ ունեցող համայնքային դպրոցներում, այն կարող է բաղկացած լինել՝ սկսած երեք սովորողից:

5. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ամսական երկու դասաժամ համույթների, երգչախմբերի միացյալ պարապմունքների համար.

3) կոնցերտմաստերական և իլյուստրատորական ժամեր՝ մեկ սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0,5-1,0 ժամ.

ա. «Ընտրովի» առարկայի ցանկից՝ դաշնամուրի համույթի (անսամբլ) նվազակցության համար,

բ. դաշնամուրի կոնցերտների կատարման համար,

գ. համույթների կամ երգչախմբերի խմբային և միացյալ պարապմունքների համար:

6. Երգչախմբի խմբավարի համար սահմանել մեկ միավոր՝ 20-30 սովորողի դեպքում: Ավելի մեծ երգչախմբի կազմի դեպքում համապատասխանաբար ավելացնել միավորների թիվը:

7. Երկրորդ գործիք, երգեցողություն ուսուցանելու դեպքում սահմանվում է լրացուցիչ ուսման վարձավճար:

8. Մինչև յոթ տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և(կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

9. Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և(կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

ԼԱՐԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ
(Ջութակ, ալտ, թավջութակ, կոնտրաբաս)
(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)							Ստուգաթղթ	Քննություն
		Դասարաններ								
		I	II	III	IV	V	VI	VII		
1.	Երաժշտական գործիք	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	I, II, III, V, VI	IV, VII
2.	Սոլֆեջիո	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	II, III, IV, V, VI	VII
3.	Երաժշտական գրականություն	---	---	---	1.5	1.5	1.5	1.5	V, VI, VII	---
4.	Նվագախումբ, համույթ կամ երգչախումբ	1.0	1.0	1.0	1.0	2.0	2.0	2.0	IV, V, VI, VII	---
5.	Ընտրովի	---	0.5	1.0	1.0	1.0	1.0	1.0	IV, VII	---
	Ընդամենը	4.5	5.0	5.5	7.0	8.0	8.0	8.0		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1, 2, 3, 4-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է VII դասարանի տարեվերջի ստուգաթղթերին և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է VII դասարանի ստուգաթղթերն ու քննությունները հանձնած սովորողներին:

2. Ալտի դասարանում ուսումը նպատակահարմար է սկսել V կամ VI դասարանից (մինչ այդ սովորողը ուսումնառում է ջութակի դասարանում): Կոնտրաբասի դասարանում ուսումը նպատակահարմար է սկսել V կամ VI դասարաններից (մինչ այդ սովորողը ուսումնառում է թավջութակի դասարանում):

3. «Երաժշտական գործիք» և «Ընտրովի» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «Սոլֆեջիո», «Երաժշտական գրականություն» և «Նվագախումբ, համույթ կամ երգչախումբ» առարկաներինը՝ խմբային:

4. «Ընտրովի» առարկաներն են՝ դաշնամուր, թերթից ընթերցում, համույթ (անսամբլ), կոմպոզիցիա և այլն:

5. Խմբային պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում՝ փոքր համակազմ ունեցող համայնքային դպրոցներում, այն կարող է բաղկացած լինել՝ սկսած երեք սովորողից:

6. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ամսական երկու դասաժամ համույթների, երգչախմբերի, նվագախմբի միացյալ պարապմունքների համար.

3) կոնցերտայտերական ժամեր՝ մեկ սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0,5-1,0 ժամ՝

ա. «Երաժշտական գործիք» առարկայի համար,

բ. համույթների, նվագախմբերի կամ երգչախմբերի խմբային և միացյալ պարապմունքների համար:

7. Ելնելով նվագախմբի կամ երգչախմբի պարապմունքների առանձնահատկություններից՝ սահմանել դեկավարի միավոր.

1) 10-12 սովորողի դեպքում՝ մեկ միավոր (նվագախումբ, համույթ)։

2) 20-30 սովորողի դեպքում՝ մեկ միավոր (երգչախումբ)։

Ավելի մեծ նվագախմբի կամ երգչախմբի դեպքում համաչափ ավելացնել միավորների թիվը։

8. Երկրորդ գործիք, երգեցողություն ուսուցանելու դեպքում սահմանվում է լրացուցիչ ուսման վարձավճար։

9. Մինչև յոթ տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ։ Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ։

10. Ուսումնական տարի սովորել դպրոցում։ Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ։

Աղյուսակ 3

ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

(Դասական, ժողովրդական, էտրադային)

(9 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)					Ստուգարք	Քննություն
		Դասարաններ						
		I	II	III	IV	V		
1.	Մեներգեցողություն	1.5	1.5	1.5	2.0	2.0	I, II, IV	III, V
2.	Սոլֆեջիո	1.5	1.5	1.5	1.5	1.5	II, III, IV	V
3.	Երաժշտական գրականություն	---	1.5	1.5	1.5	1.5	III, IV, V	---
4.	Երգչախումբ կամ համույթ	---	1.0	2.0	2.0	2.0	III, IV, V	---
5.	Դաշնամուր	1.0	1.0	1.0	1.0	1.0	III, IV, V	---
	Ընդամենը	4.0	6.5	7.5	8	8		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1, 2, 3, 4-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվագագույն քանակը, որը պարտադիր է V դասարանի տարեվերջի ստուգարքներին և ավարտական քննություններին մասնակցելու համար։ Դպրոցի ավարտական վկայականը տրվում է V դասարանի ստուգարքները և քննությունները հանձնած սովորողներին։

2. «Մեներգեցողություն» և «Դաշնամուր» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «Սոլֆեջիո», «Երաժշտական գրականություն» և «Երգչախումբ կամ համույթ» առարկաներինը՝ խմբային։

3. Խմբային պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում՝ փոքր համակազմ ունեցող համայնքային դպրոցներում, այն կարող է բաղկացած լինել՝ սկսած երեք սովորողից։

4. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ամսական երկու դասաժամ համույթների, երգչախմբերի միացյալ պարապմունքների համար.

- 3) կոնցերտայտերական ժամեր՝ մեկ սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0,5-1,0 ժամ՝
 ա. «Մեներգեցողություն» առարկայի համար,
 բ. երգչախմբերի կամ համույթների խմբային և միացյալ պարապմունքների համար:
5. Երգչախմբի խմբավարի համար սահմանել մեկ միավոր՝ 20-30 սովորողի դեպքում: Ավելի մեծ երգչախմբի կազմի դեպքում համապատասխանաբար ավելացնել միավորների թիվը:
6. Դպրոցներում «Մեներգեցողություն» առարկայի և խմբային պարապմունքների մեկ դասաժամը սահմանել 40 րոպե:
7. Երկրորդ գործիք ուսուցանելու դեպքում սահմանվում է լրացուցիչ ուսման վարձավճար:
8. Մինչև ինը տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և(կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:
9. Ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և(կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 4

ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ
 (Դասական, ժողովրդական, էստրադային)
 (6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)							Ստուգաք	Քննություն
		Դասարաններ								
		I	II	III	IV	V	VI	VII		
1.	Մեներգեցողություն	1.5	1.5	1.5	1.5	1.5	2.0	2.0	I, II, III, IV, V, VI	VII
2.	Սոլֆեջիո	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	II, III, IV, V, VI	VII
3.	Երաժշտական գրականություն	---	---	---	1.5	1.5	1.5	1.5	V, VI, VII	---
4.	Երգչախումբ կամ համույթ	---	1.0	1.0	1.0	2.0	2.0	2.0	IV, V, VI, VII	---
5.	Դաշնամուր	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	III, IV, V, VI, VII	---
	Ընդամենը	4.0	5.0	5.0	6.5	7.5	8.0	8.0		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

- Աղյուսակի 1, 2, 3, 4-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է VII դասարանի տարեվերջի ստուգաքներին և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է VII դասարանի ստուգաքներն ու քննությունները հանձնած սովորողներին:
- «Մեներգեցողություն» և «Դաշնամուր» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «Սոլֆեջիո», «Երաժշտական գրականություն» և «Երգչախումբ կամ համույթ» առարկաներինը՝ խմբային:

3. Խմբային պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում՝ փոքր համակազմ ունեցող համայնքային դպրոցներում, այն կարող է բաղկացած լինել՝ սկսած երեք սովորողից:

4. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ամսական երկու դասաժամ համույթների, երգչախմբերի միացյալ պարապմունքների համար.

3) կոնցերտայտերական ժամեր՝ մեկ սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0,5–1,0 ժամ՝

ա. «Մեներգեցողություն» առարկայի համար,

բ. երգչախմբերի կամ համույթների խմբային և միացյալ պարապմունքների համար:

5. Երգչախմբի խմբավարի համար սահմանել մեկ միավոր՝ 20-30 սովորողի դեպքում: Ավելի մեծ երգչախմբի կազմի դեպքում համապատասխանաբար ավելացնել միավորների թիվը:

6. Դպրոցներում «Մեներգեցողություն» առարկայի և խմբային պարապմունքների մեկ դասաժամը սահմանել 40 րոպե:

7. Երկրորդ գործիք ուսուցանելու դեպքում սահմանվում է լրացուցիչ ուսման վարձավճար:

8. Մինչև յոթ տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

9. Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 5

ՓՈՂԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ, ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ԱԿՈՐԴԵՈՆ, ՏԱՎԻՂ, ԿԻԹԱՌ

(9 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)					Ստուգաք	Քննություն
		Դասարաններ						
		I	II	III	IV	V		
1.	Երաժշտական գործիք	2.0	2.0	2.0	2.0	2.0	I, II, IV,	III, V
2.	Սոլֆեջիո	1.5	1.5	1.5	1.5	1.5	II, III, IV	V
3.	Երաժշտական գրականություն	---	1.5	1.5	1.5	1.5	III, IV, V	---
4.	Նվագախումբ, համույթ կամ երգչախումբ	1.0	1.0	2.0	2.0	2.0	III, IV, V	---
5.	Ընտրովի	---	1.0	1.0	1.0	1.0	III, V	---
	Ընդամենը	4.5	7.0	8.0	8.0	8.0		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1, 2, 3, 4-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է V դասարանի տարեվերջի

ստուգարքներին և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է V դասարանի ստուգարքներն ու քննությունները հանձնած սովորողներին:

2. «Երաժշտական գործիք» և «Ընտրովի» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «Սոլֆեջիո», «Երաժշտական գրականություն» և «Նվագախումբ, համույթ կամ երգչախումբ» առարկաներինը՝ խմբային:

3. «Ընտրովի» առարկաներն են՝ թերթից ընթերցում, համույթ (անսամբլ), կոմպոզիցիա և այլն:

4. Խմբային պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում՝ փոքր համակազմ ունեցող համայնքային դպրոցներում, այն կարող է բաղկացած լինել՝ սկսած երեք սովորողից:

5. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ամսական երկու դասաժամ համույթների, երգչախմբերի, նվագախմբի միացյալ պարապմունքների համար.

3) կոնցերտայտերական ժամեր՝ մեկ սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0,5–1,0 ժամ՝

ա. «Երաժշտական գործիք» առարկայի համար,

բ. համույթների, նվագախմբերի կամ երգչախմբերի խմբային և միացյալ պարապմունքների համար:

6. Ելնելով նվագախմբի կամ երգչախմբի պարապմունքների առանձնահատկություններից՝ սահմանել դեկավարի միավոր.

1) 10-12 սովորողի դեպքում՝ մեկ միավոր (նվագախումբ):

2) 20-30 սովորողի դեպքում՝ մեկ միավոր (երգչախումբ):

Ավելի մեծ նվագախմբի կամ երգչախմբի դեպքում համապատասխանաբար ավելացնել միավորների թիվը:

7. Երկրորդ գործիք կամ երգեցողություն ուսուցանելու դեպքում սահմանվում է լրացուցիչ ուսման վարձավճար:

8. Մինչև ինը տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

9. Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 6

ՓՈՂԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ, ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ԱԿՈՐԴԵՈՆ, ՏԱՎԻՂ, ԿԻԹԱՆ

(9 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)							Ստուգարք	Քննություն
		Դասարաններ								
		I	II	III	IV	V	VI	VII		
1.	Երաժշտական գործիք	1.5	1.5	2.0	2.0	2.0	2.0	2.0	I, II, III, V, VI	IV, VII
2.	Սոլֆեջիո	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	II, III, IV, V, VI	VII

3.	Երաժշտական գրականություն	---	---	---	1.5	1.5	1.5	1.5	V, VI, VII	---
4.	Երգչախումբ կամ համույթ	1.0	1.0	1.0	1.0	2.0	2.0	2.0	IV, V, VI, VII	---
5.	Դաշնամուր	---	0.5	1.0	1.0	1.0	1.0	1.0	IV, VII	---
	Ընդամենը	4.0	4.5	5.5	7.0	8.0	8.0	8.0		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1, 2, 3, 4-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվագագույն քանակը, որը պարտադիր է VII դասարանի տարեվերջի ստուգաքննարկին և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է VII դասարանի ստուգաքննարկի քննությունները հանձնած սովորողներին:

2. «Երաժշտական գործիք» և «Ընտրովի» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «Սոլֆեջիո», «Երաժշտական գրականություն» և «Նվագախումբ, համույթ կամ երգչախումբ» առարկաներինը՝ խմբային:

3. «Ընտրովի» առարկաներն են՝ թերթից ընթերցում, համույթ (անսամբլ), կոմպոզիցիա և այլն:

4. Խմբային պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում՝ փոքր համակազմ ունեցող համայնքային դպրոցներում, այն կարող է բաղկացած լինել՝ սկսած երեք սովորողից:

5. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ամսական երկու դասաժամ համույթների, երգչախմբերի, նվագախմբի միացյալ պարապմունքների համար.

3) կոնցերտմայստերական ժամեր՝ մեկ սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0,5 – 1,0 ժամ՝

ա. «Երաժշտական գործիք» առարկայի համար,

բ. համույթների, նվագախմբերի կամ երգչախմբերի խմբային և միացյալ պարապմունքների համար:

6. Ելնելով նվագախմբի կամ երգչախմբի պարապմունքների առանձնահատկություններից՝ սահմանել դեկավարի միավոր.

1) 10-12 սովորողի դեպքում՝ մեկ միավոր (նվագախումբ).

2) 20-30 սովորողի դեպքում՝ մեկ միավոր (երգչախումբ):

Ավելի մեծ նվագախմբի կամ երգչախմբի դեպքում համապատասխանաբար ավելացնել միավորների թիվը:

7. Երկրորդ գործիք կամ երգեցողություն ուսուցանելու դեպքում սահմանվում է լրացուցիչ ուսման վարձավճար:

8. Մինչև յոթ տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և(կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

9. Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և(կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

ԿԵՐՊՈՒՐՎԵՍ

(10 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)				Ստուգաբաշխ	Քննություն
		Դասարաններ					
		I	II	III	IV		
1.	Գծանկար	3.0	3.0	4.0	4.0	II, III	IV
2.	Գունանկար	3.0	3.0	3.0	3.0	II, III	IV
3.	Կոմպոզիցիա (ստեղծագործական թեմատիկ նկարչություն) հաստոցային/կիրառական	2/1	2/1	2/1	2/1	II, III	IV
4.	Քանդակ կամ դեկորատիվ-կիրառական արվեստ	2.0	2.0	1.0	1.0	II, III	IV
5.	Արվեստի պատմություն	1.0	1.0	1.0	1.0	IV	---
6.	Ընտրովի	1.0	1.0	1.0	1.0	II, IV	---
	Ընդամենը	13.0	13.0	13.0	13.0		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1, 2, 3, 4, 5-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է IV դասարանի տարեվերջի ստուգաբանքներին և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է IV դասարանի ստուգաբանքներն ու քննությունները հանձնած սովորողներին:

2. Դպրոցի հայեցողությամբ «Կոմպոզիցիա» առարկայի ավարտական քննությունը կարող է կազմակերպվել հաստոցային կամ կիրառական ձևերից մեկով:

3. «Ընտրովի» առարկաներն են՝ հեռանկարչություն, անատոմիա, ճեպանկար բնորդից, գրաֆիկա, համակարգչային գրաֆիկա և այլն: Ընտրովի առարկայի դասաժամի 0,25-ը I-IV դասարաններում նպատակահարմար է տրամադրել «ճեպանկար բնորդից» առարկային:

4. Խմբային պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում՝ փոքր համակազմ ունեցող համայնքային դպրոցներում, այն կարող է բաղկացած լինել մինչև հինգ սովորողից:

5. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) ժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ժամեր բնորդի վարձատրության համար՝ ոչ ավելի, քան յուրաքանչյուր առարկային տրամադրվող ժամաքանակի 30 տոկոսը.

3) մանկավարժական աշխատանքի լրացուցիչ 56 ժամ՝ պլեներային դասերն ըստ խմբերի անցկացնելու համար: Այդ դասաժամերը կարող են օգտագործվել ուսումնական տարվա տարբեր ժամանակահատվածներում:

6. Մինչև տասը տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

7. Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

ԿԵՐՊԱՐՎԵՍ

(6-10 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)							Ստուգարք	Քննություն
		Դասարաններ								
		I	II	III	IV	V	VI	VII		
1.	Կերպարվեստի հիմունքներ և նկարչություն	2.0	2.0	2.0					III	
2.	Կիրառական արվեստ	2.0	2.0	2.0					III	
3.	Ծեփագործություն	2.0	2.0	2.0					III	
4.	Գծանկար	---	---	---	3,0	3,0	4,0	4,0	IV, V, VI	VII
5.	Գունանկար	---	---	---	3,0	3,0	3,0	3,0	IV, V, VI	VII
6.	Կոմպոզիցիա (ստեղծագործական թեմատիկ նկարչություն) հաստոցային/կիրառական	---	---	---	2/1	2/1	2/1	2/1	IV, V, VI	VII
7.	Քանդակ կամ կիրառական արվեստ	---	---	---	2,0	2,0	1,0	1,0	IV, V, VI	VII
8.	Արվեստի պատմություն	---	---	---	1.0	1.0	1.0	1.0	V, VI, VII	---
9.	Ընտրովի	0.5	0.5	1.0	1.0	1.0	1.0	1.0	IV, VII	---
	Ընդամենը	6.5	6.5	7.0	13.0	13.0	13.0	13.0		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 4, 5, 6, 7, 8-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է VII դասարանի տարեվերջի ստուգարքներին և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է VII դասարանի ստուգարքներն ու քննությունները հանձնած սովորողներին:

2. Դպրոցի հայեցողությամբ «Կոմպոզիցիա» առարկայի ավարտական քննությունը կարող է կազմակերպվել հաստոցային կամ կիրառական ձևերից մեկով:

3. «Ընտրովի» առարկաներն են՝ հեռանկարչություն, անատոմիա, ճեպանկար բնորդից, գրաֆիկա, համակարգչային գրաֆիկա և այլն: «Ընտրովի» առարկայի դասաժամի 0,25-ը դասարաններում նպատակահարմար է տրամադրել «Ճեպանկար բնորդից» առարկային:

4. Խմբային պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում՝ փոքր համակազմ ունեցող համայնքային դպրոցներում, այն կարող է բաղկացած լինել մինչև հինգ սովորողից:

5. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) ժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ժամեր բնորդի վարձատրության համար՝ ոչ ավելի քան յուրաքանչյուր առարկային տրամադրվող ժամաքանակի 30 տոկոսը.

3) մանկավարժական աշխատանքի լրացուցիչ 56 ժամ՝ պլեներային դասերն ըստ խմբերի անցկացնելու համար: Այդ դասաժամերը կարող են օգտագործվել ուսումնական տարվա տարբեր ժամանակահատվածներում:

6. Մինչև ութ տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների

ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

7. Ուսումնական տարածքները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 9

ԴԵՎՈՐԱՏԻՎ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ
(10 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)				Ստուգարք	Քննություն
		Դասարաններ					
		I	II	III	IV		
1.	Գծանկար	1	2	2	2	II, III	IV
2.	Գորգագործություն	1	1	2	2	II, III	IV
3.	Մանրանկարչություն	2	2	1	1	II, III	IV
4.	Գորելեն	2	2	2	3	II, III	IV
5.	Շյուղագործություն	1	-	-	-		
6.	Կարպետագործություն	2	3	3	3	II, III	IV
7.	Արվեստի պատմություն	1	1	1	1	IV	-
8.	Ընտրովի առարկա	1	1	1	1	II, IV	-
Ընդամենը		11	12	12	13		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1, 2, 3, 4, 5, 6, 7-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է IV դասարանի տարեվերջի ստուգարքներին և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է IV դասարանի ստուգարքներն ու քննությունները հանձնած սովորողներին:

2. «Ընտրովի» առարկաներն են՝ հեռանկարչություն, անատոմիա, ճեպանկար բնորդից, գրաֆիկա, համակարգչային գրաֆիկա և այլն: Այս ցանկը կարող է ընդլայնվել՝ ըստ անհրաժեշտության: Ընտրովի առարկայի դասաժամի 0,25-ը I-IV դասարաններում նպատակահարմար է տրամադրել «ճեպանկար բնորդից» առարկային:

3. Խմբակային պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում այն կարող է բաղկացած լինել մինչև հինգ սովորողից:

4. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում են ժամեր՝ համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար:

5. Դպրոցներում կարող են գործել մինչև տասը տարեկան երեխաների համար նախապատրաստական դասարաններ, որոնց առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ՝ վճարովի հիմունքներով:

6. Առարկաների ընտրությունը կատարվում է շրջանավարտի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ՝ վճարովի հիմունքներով:

7. Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և(կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 10

ՔԱՆՂԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՅՏԻ ՓՈՐՍԳՐՈՒԹՅՈՒՆ
(10 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)				Ստուգարք	Քննություն
		Դասարաններ					
		I	II	III	IV		
1.	Քանդակագործություն	4	4	5	5	II, III	IV
2.	Փայտի փորագրություն	3	3	4	5	II, III	IV
3.	Ծեփագործություն	1	1	1	-	II, III	IV
4.	Գծանկար	3	3	3	3	II, III	IV
5.	Անատոմիա	1	2	-	-	IV	-
6.	Ընտրովի առարկա	1	-	-	-	II, IV	-
Ընդամենը		13	13	13	13		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1, 2, 3, 4, 5-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է IV դասարանի տարեվերջի ստուգարքներին և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է IV դասարանի ստուգարքներն ու քննությունները հանձնած սովորողներին:

2. «Ընտրովի» առարկաներն են՝ հեռանկարչություն, անատոմիա, ճեպանկար բնորոշից, գրաֆիկա, համակարգչային գրաֆիկա և այլն: Այս ցանկը կարող է ընդլայնվել՝ ըստ անհրաժեշտության: Ընտրովի առարկայի դասաժամի 0.25-ը I-IV դասարաններում նպատակահարմար է տրամադրել «ճեպանկար բնորոշից առարկային»:

3. Խմբակային պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում այն կարող է բաղկացած լինել մինչև հինգ սովորողից:

4. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում են ժամեր՝ համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար:

5. Դպրոցներում կարող են գործել մինչև տասը տարեկան երեխաների համար նախապատրաստական դասարաններ, որոնց առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ՝ վճարովի հիմունքներով:

6. Առարկաների ընտրությունը կատարվում է շրջանավարտի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ՝ վճարովի հիմունքներով:

7. Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և(կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 11

ՊԱՐԱՐՎԵՍ

(9 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)					Ստուգարք	Քննություն
		Դասարաններ						
		I	II	III	IV	V		
1.	Դասական պար	3.0	4.5	4.5	4.5	4.5	II, III, IV	V
2.	Հայկական պար	---	3.0	3.0	3.0	3.0	III, IV	V
3.	Ժամանակակից պարահանդեսային պար	---	---	1.5	1.5	1.5	III, IV	V
4.	Պատմակենցաղային պար	---	1.5	---	---	---	II	---
5.	Ժողովուրդներին բնորոշ բեմական պար	---	---	1.5	1.5	1.5	III, IV	V
6.	Ռիթմիկա և պար	1.0	1.0	---	---	---	II	---
7.	Մարմնամարզություն (պարտեր)	1.0	---	---	---	---	---	---
8.	Երաժշտության գրագիտություն և ունկնդրում	1.0	0.5	0.5	0.5	0.5	V	---
9.	Արվեստի պատմություն	---	1.0	1.0	1.0	1.0	V	---
10.	Բեմական փորձառություն (պրակտիկա)	0.5	0.5	0.5	0.5	0.5	---	---
	Ընդամենը	6.5	12.0	12.5	12.5	12.5		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1, 2, 3, 4, 5, 8, 9, 10-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է V դասարանի տարեվերջի ավարտական ստուգաքննություն և քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է V դասարանի ստուգաքննություն և քննությունները հանձնած սովորողներին:

2. Բոլոր առարկաները նախատեսվում է ուսուցանել խմբային պարապմունքների եղանակով, բացառությամբ սույն ուսումնական պլանի աղյուսակ 11-ի 10-րդ կետի՝ «Բեմական փորձառություն» առարկայի, որն անհատական պարապմունք է և պլանավորված է յուրաքանչյուր սովորողի հաշվարկով: «Բեմական փորձառություն» առարկայի դասաժամերի ընդհանուր քանակի բաշխման իրավունքը տրվում է արվեստի կամ պարարվեստի դպրոցների տնօրինությանը:

3. «Դասական պար», «Հայկական պար», «Ժամանակակից պարահանդեսային պար», «Պատմակենցաղային պար», «Ժողովուրդներին բնորոշ բեմական պար առարկաների պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 8-12, իսկ «Ռիթմիկա և պար», «Մարմնամարզություն (պարտեր)», «Երաժշտության գրագիտություն և ունկնդրում» և «Արվեստի պատմություն» առարկաների խմբերում՝ 10-16: Առանձին դեպքերում առարկաների ուսուցումը կարող է իրականացվել առանձնացված տղաների և աղջիկների խմբերով (տղաների խմբում թվաքանակը թույլատրելի է սկսած չորսից):

4. Ուսումնական պլանի դասաժամերից բացի՝ անհրաժեշտ է մանկավարժական աշխատանքի ժամեր նախատեսել նախաեկույթային փորձերի և միջոցառումների նախապատրաստման համար:

5. Ուսումնական պլանի կատարման նպատակով անհրաժեշտ է նախատեսել նվազակցության ժամեր:

1) սույն ուսումնական պլանի աղյուսակ 11-ի 1-6-րդ կետերի առարկաների խմբային և «Բեմական փորձառություն» առարկայի անհատական պարապմունքների շաբաթական դասաժամերին հավասար:

2) նախաելոյթային միացյալ պարապմունքների համար:

6. Հնգամյա կրթության դեպքում III, IV, V դասարաններում խմբի համալրման դեպքում «Հայկական պար» և «Ժամանակակից պարահանդեսային պար» առարկաների շաբաթական դասաժամերի գումարային քանակը՝ 4,5 ժամ, դպրոցի մանկավարժական խորհրդի թույլտվությամբ կարող է տրամադրվել այդ առարկաներից որևէ մեկի ուսուցմանը ըստ սովորողների նախասիրության (համապատասխանաբար մյուսը բացառելով ուսումնական պլանից):

7. Դպրոցի ֆինանսական հնարավորությունից ելնելով և հիմնադրի կողմից հաստատված ուսման վարձի լրավճարով կարող է պլանավորվել յուրաքանչյուր աշակերտին շաբաթական 0,5-1,5 ժամ «Ընտրովի» առարկա: «Ընտրովի» առարկաներն են երաժշտական գործիք, մեներգեցողություն, ստեյ, դերասանի վարպետություն և այլն:

8. Մինչև ինը տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և(կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

9. Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և(կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 12

ՊԱՐԱՐՎԵՍ

(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)							Ստուգարք	Քննություն
		Դասարաններ								
		I	II	III	IV	V	VI	VII		
1.	Դասական պար	---	---	4.5	4.5	4.5	4.5	4.5	III, IV, V, VI	VII
2.	Հայկական պար	---	---	3.0	3.0	3.0	3.0	3.0	III, IV, V, VI	VII
3.	Ժամանակակից պարահանդեսային պար	---	---	---	---	1.5	1.5	1.5	V, VI	VII
4.	Պատմակենցաղային պար	---	---	1.5	1.5				III, IV	---
5.	Ժողովուրդներին բնորոշ բեմական պար	---	---	---	1.5	1.5	1.5	1.5	IV, V, VI	VII
6.	Ռիթմիկա և պար	4.0	4.0	---	---	---	---	---	II	---
7.	Մարմնամարզություն	1.0	1.0	---	---	---	---	---	II	---
8.	Երաժշտության գրագիտություն և ունկնդրում	1.0	1.0	1.0	0.5	0.5	0.5	0.5	VI	---
9.	Արվեստի պատմություն	---	---	---	1.0	1.0	1.0	1.0	V, VI, VII	---
10.	Բեմական փորձառություն (պրակտիկա)	---	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	---	---
	Ընդամենը	6.0	6.5	10.5	12.5	12.5	12.5	12.5		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1, 2, 3, 4, 5, 8, 9, 10-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է VII դասարանի տարեվերջի ավարտական ստուգարքներին և քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է VII դասարանի ստուգարքները և քննությունները հանձնած սովորողներին:

2. Բոլոր առարկաները նախատեսվում է ուսուցանել խմբային պարապմունքների եղանակով, բացառությամբ սույն ուսումնական պլանի աղյուսակ 12-ի 10-րդ կետի՝ «Բեմական փորձառություն» առարկայի, որն անհատական պարապմունք է և պլանավորված է յուրաքանչյուր սովորողի հաշվարկով: «Բեմական փորձառություն» առարկայի դասաժամերի ընդհանուր քանակի բաշխման իրավունքը տրվում է արվեստի կամ պարարվեստի դպրոցների տնօրինությանը:

3. «Դասական պար», «Հայկական պար», «Ժամանակակից պարահանդեսային պար», «Պատմակենցաղային պար», «Ժողովուրդներին բնորոշ բեմական պար» առարկաների պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 8-12, իսկ «Ռիթմիկա և պար», «Մարմնամարզություն (պարտեր)», «Երաժշտության գրագիտություն և ունկնդրում» և «Արվեստի պատմություն» առարկաների խմբերում՝ 10-16: Առանձին դեպքերում առարկաների ուսուցումը կարող է իրականացվել առանձնացված տղաների և աղջիկների խմբերով (տղաների խմբում թվաքանակը թույլատրելի է սկսած չորսից):

4. Ուսումնական պլանի դասաժամերից բացի՝ անհրաժեշտ է մանկավարժական աշխատանքի ժամեր նախատեսել նախաեկույթային փորձերի և միջոցառումների նախապատրաստման համար:

5. Ուսումնական պլանի կատարման նպատակով անհրաժեշտ է նախատեսել նվազակցության ժամեր.

1) սույն ուսումնական պլանի աղյուսակ 12-ի 1-6-րդ կետերի առարկաների խմբային և «Բեմական փորձառություն» առարկայի անհատական պարապմունքների շաբաթական դասաժամերին համահավասար.

2) նախաեկույթային միացյալ պարապմունքների համար:

6. Յոթամյա կրթության դեպքում՝ V, VI, VII դասարաններում խմբի համալրման դեպքում «Հայկական պար» և «Ժամանակակից պարահանդեսային պար» առարկաների շաբաթական դասաժամերի գումարային քանակը՝ 4,5 ժամ, դպրոցի մանկավարժական խորհրդի թույլտվությամբ կարող է տրամադրվել այդ առարկաներից որևէ մեկի ուսուցմանը ըստ սովորողների նախասիրության (համապատասխանաբար մյուսը բացառելով ուսումնական պլանից):

7. Դպրոցի ֆինանսական հնարավորություններից ելնելով և հիմնադրի կողմից հաստատված ուսման վարձի լրավճարով կարող է պլանավորվել յուրաքանչյուր սովորողին շաբաթական 0,5-1,5 ժամ «Ընտրովի» առարկա: «Ընտրովի» առարկայի ցանկը՝ երաժշտական գործիք, մեներգեցողություն, ստեյ, դերասանի վարպետություն և այլն:

8. Մինչև յոթ տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և(կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

9. Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և(կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

ԹԱՏԵՐԱԸՎԵՍ

(9 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)					Ստուգարք	Քննություն
		Դասարաններ						
		I	II	III	IV	V		
1.	Դերասանի վարպետություն	2.0	2.0	2.0	3.0	3.0	II, III, IV	V
2.	Բեմական խոսք	1.0	1.0	1.0	0.5	0.5	II, III, IV	V
3.	Բեմական շարժում	---	1.0	1.0	1.0	1.0	---	---
4.	Արվեստի պատմություն	---	1.0	1.0	1.0	1.0	III, V	---
5.	Պար	---	1.0	1.0	1.0	1.0	III, V	---
6.	Ռիթմիկա	1.0	---	---	---	---	---	---
7.	Երաժշտական գրականություն և ունկնդրում	1.0	0.5	0.5	0.5	0.5	V	---
8.	Բեմական փորձառություն (պրակտիկա)	0.5	0.5	0.5	0.5	0.5	---	---
9.	Ընտրովի	1.0	1.0	1.0	1.0	1.0	III, V	---
	Ընդամենը	6.5	8.0	8.0	8.5	8.5		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1, 2, 3, 4-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է V դասարանի տարեկերջի ավարտական ստուգարքներին և քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է V դասարանի ստուգարքները և քննությունները հանձնած սովորողներին:

2. Բոլոր առարկաները նախատեսվում է ուսուցանել խմբային պարապմունքների եղանակով, բացառությամբ սույն ուսումնական պլանի աղյուսակ 13-ի 8-րդ կետի՝ «Բեմական փորձառություն» առարկայի, որն անհատական պարապմունք է և պլանավորված է յուրաքանչյուր սովորողի հաշվարկով: «Բեմական փորձառություն» առարկայի դասաժամերի ընդհանուր քանակի բաշխման իրավունքը տրվում է արվեստի դպրոցների տնօրինությանը:

3.«Ընտրովի» առարկաներն են՝ երաժշտական գործիք, երգեցողություն, գեղարվեստական խոսքը, տիկնիկային թատրոն, պար և այլն:

4.Խմբային պարապմունքների խմբերի սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12 սովորող, «Բեմական խոսք» առարկայի համար՝ մինչև հինգ սովորող:

5.«Բեմական փորձառություն (պրակտիկա)»-ը առարկայով նախատեսված մանկավարժական աշխատանքի ժամերը պլանավորվում են մեկ սովորողի համար շաբաթական 0,5 դասաժամի չափով: Դպրոցների տնօրինությանը տրվում է այդ դասաժամերի ընդհանուր քանակը բաշխելու իրավունքը:

6. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) նվազակցողի հաստիք ընտրովի առարկաների (բացի դաշնամուր, ակորդեոն, տավիդ, կիթառ գործիքների) համար:

7. Մինչև ինը տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ:

Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և(կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

8. Ուսումնական տարի սկսվելուց հետո կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և(կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 14

ԹՄՏԵՐԱՐՎԵՍ

(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)							Մտու-գարք	Քննու-թյուն
		Դասարաններ								
		I	II	III	IV	V	VI	VII		
1.	Դերասանի վարպետություն	2.0	2.0	2.0	2.0	2.0	3.0	3.0	II, III, V, VI	IV, VII
2.	Բեմական խոսք	1.0	1.0	1.0	0.5	0.5	0.5	0.5	II, III, V, VI	IV, VII
3.	Բեմական շարժում	---	---	---	1.0	1.0	1.0	1.0	---	---
4.	Արվեստի պատմություն	---	---	---	1.0	1.0	1.0	1.0	V, VII	---
5.	Պար	---	---	1.0	1.0	1.0	1.0	1.0	IV, VII	---
6.	Ռիթմիկա	1.0	1.0	---	---	---	---	---	IV, VII	---
7.	Երաժշտության գրագի-տություն և ունկնդրում	---	---	0.5	0.5	0.5	0.5	0.5	---	---
8.	Բեմական փորձառու-թյուն (պրակտիկա)	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	---	---
9.	Ընտրովի	0.5	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	IV, VII	---
	Ընդամենը	5.0	5.5	6.0	7.5	7.5	8.5	8.5		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1, 2, 3, 4-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է VII դասարանի տարեվերջի ավարտական ստուգաթղթերին և քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է VII դասարանի ստուգաթղթերը և քննությունները հանձնած սովորողներին:

2. Բոլոր առարկաները նախատեսվում է ուսուցանել խմբային պարապ-մունքների եղանակով, բացառությամբ սույն ուսումնական պլանի աղյուսակ 14-ի 8-րդ կետի՝ «Բեմական փորձառություն» առարկայի, որն անհատական պարապմունք է և պլանավորված է յուրաքանչյուր սովորողի հաշվարկով: «Բեմական փորձառություն» առարկայի դասաժամերի ընդհանուր քանակի բաշխման իրավունքը տրվում է արվեստի դպրոցների տնօրինությանը:

3. «Ընտրովի» առարկաներն են՝ երաժշտական գործիք, երգեցողություն, գեղարվեստական խոսք, տիկնիկային թատրոն, պար և այլն:

4. Խմբային պարապմունքների խմբերի սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12 սովորող, «Բեմական խոսք» առարկայի համար՝ մինչև հինգ սովորող:

5. «Բեմական փորձառություն (պրակտիկա)» առարկայով նախատեսված մանկավարժական աշխատանքի ժամերը պլանավորվում են մեկ սովորողի համար շաբաթական 0,5 դասաժամի չափով: Դպրոցների տնօրինությանը տրվում է այդ դասաժամերի ընդհանուր քանակը բաշխելու իրավունքը:

6. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) նվագակցողի հաստիք ընտրովի առարկաների (բացի դաշնամուր, ակորդեոն, տավիդ, կիթառ գործիքների) համար:

7. Մինչև յոթ տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և(կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

8. Ուսումն ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և(կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2017 թվականի հոկտեմբերի 23-ին
Պետական գրանցման համարը 1111767

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«16» հոկտեմբերի 2017թ.

N 351-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 12-Ի N 9-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր
հարկային պետական ծառայության պետի 2014 թվականի մայիսի 12-ի «Հարկ
վճարողի հարկային պարտավորությունները ճշգրտելու կարգը և եզրակա-
ցության ձևը հաստատելու մասին» N 9-Ն հրամանով հաստատված N1
հավելվածի 8-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» սեպտեմբերի 2017 թվականի

N 44-Ս

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի N 50Ա ՈՐՈՇՄԱՄԲ «ՎԻՍԱՎՏ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐՎԱԾ N 0008
ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒՇԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և հաշվի առնելով «ՎԻՍԱՎՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի օգոստոսի 18-ի գրությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 7-ի «ՎԻՍԱՎՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՋԵՐՄԱՋՈՒՐ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզիա տրամադրելու մասին» N 50Ա որոշմամբ տրված N 0008 լիցենզիան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» սեպտեմբերի 2017 թվականի

N 45-Ա

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի
N 13-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 57Ն որոշումը և «ՎԻՍԱՎՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի օգոստոսի 15-ի գրությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի մարտի 30-ի «ՎԻՍԱՎՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՋԵՐՄԱՋՈՒՐ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 13-Ա որոշման հավելվածի 4-րդ գլխի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Լիցենզավորված անձը «ՋԵՐՄԱՋՈՒՐ» ՓԷԿ-ում լիցենզավորված գործունեությունն իրականացնում է 2017 թվականին շահագործման հանձնված ՀԱ-1, ՀԱ-2, ՀԱ-3 և ՀԱ-4 հիդրոագրեգատներով, որոնց դրվածքային հզորությունը կազմում է 12,003 մեգավատտ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» սեպտեմբերի 2017 թվականի

N 46-Ս

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
31-Ի N 3Ա ՈՐՈՇՄԱՄԲ «ԿԱՐՀԱՍ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՇԱԹԱՂԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ՏՐՎԱԾ N 0001 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և հաշվի առնելով «ԿԱՐՀԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Քաշաթաղի մասնաճյուղի 2017 թվականի օգոստոսի 4-ի գրությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է.

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 31-ի «ԿԱՐՀԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Քաշաթաղի մասնաճյուղին «ԱՂԱՎՆՈ-Կ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզիա տրամադրելու մասին» N 3Ա որոշմամբ տրված N 0001 լիցենզիան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ՍԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» սեպտեմբերի 2017 թվականի

N 47-Ս

ք. Ստեփանակերտ

**«ԿԱՐՀԱՍ» ՄԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՇԱԹԱՂԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ «ԱՂԱՎՆՈ-Կ»
ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ
(ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետը, 17-19-րդ հոդվածները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 17Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 57Ն որոշումը և հաշվի առնելով «ԿԱՐՀԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Քաշաթաղի մասնաճյուղի 2017 թվականի օգոստոսի 4-ի գրությունը և հայտը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. «ԿԱՐՀԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Քաշաթաղի մասնաճյուղին տրամադրել «ԱՂԱՎՆՈ-Կ» փոքր հիդրոէլեկտրակայանում (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Մոշաթաղ համայնքի վարչական տարածքում՝ Աղավնո գետի վրա (բնական ջրահոսք)) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2031 թվականի սեպտեմբերի 29-ը գործողության ժամկետով:

2. Հաստատել «ԿԱՐՀԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Քաշաթաղի մասնաճյուղի «ԱՂԱՎՆՈ-Կ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2017 թվականի սեպտեմբերի 29-ի N 47-Ա որոշման

**«ԿԱՐՀԱՍ» ՍԱՀՄԱՆՈՒՄ ԱԿՏ ԴԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՔԱՇԱԹՄԱՂԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՒ՝ «ԱՂԱՎՆՈ-Կ» ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆԱՆՈՒՄ
ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ**

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**(Լիցենզիա N 0005, տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի N 47-Ա որոշմամբ)**

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

«ԿԱՐՀԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Քաշաթաղի մասնաճյուղի «ԱՂԱՎՆՈ-Կ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմաններում (այսուհետ՝ Լիցենզիայի պայմաններ) օգտագործված որոշ հասկացություններ սահմանվում են հետևյալ կերպ.

Հանձնաժողով - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով.

Լիցենզիա - Հանձնաժողովի կողմից լիցենզավորված անձին տրված փաստաթուղթ, որը հավաստում է էներգետիկայի բնագավառում սահմանված պայմաններով էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեություն իրականացնելու իրավունք՝

Լիցենզավորված անձ - «ԿԱՐՀԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Քաշաթաղի մասնաճյուղ.

Սպառող - Էլեկտրական էներգիայի (հզորության), բնական գազի կամ ջերմային էներգիայի սպառման պահանջարկ ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն, որն էներգիայի մատակարարման պայմանագիր է կնքել Լիցենզավորված անձի հետ՝

Հաղորդող - Էլեկտրաէներգիայի (հզորության) հաղորդման Լիցենզիա ստացած իրավաբանական անձ՝

Բաշխող - Էլեկտրաէներգիայի (հզորության) բաշխման Լիցենզիա ստացած իրավաբանական անձ՝

Արտադրող - Էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության Լիցենզիա ստացած իրավաբանական անձ՝

Ներկրող - Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն էլեկտրական էներգիա (հզորություն) ներկրելու Լիցենզիա ստացած իրավաբանական անձ.

Արտահանող - Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից էլեկտրաէներգիայի (հզորության) արտահանման Լիցենզիա ստացած իրավաբանական անձ՝

Տորս-մաժոր - Արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամ քից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ

դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2017 թվականի սեպտեմբերի 29-ից:
2. Լիցենզիան գործում է մինչև 2031 թվականի սեպտեմբերի 29-ը:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3. Լիցենզիայով իրավունք է տրվում «ԿԱՐԶԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Քաշաթաղի մասնաճյուղին «ԱՂԱՎՆՈ-Կ» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ նաև ՓՀԷԿ)՝ սահմանված կարգով իրեն արտոնված հողատարածքում, իրականացնելու էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզավորված գործունեություն:

4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԷՆԵՐԳԱՏԵՂԱԿԱՑԱՆՔՆԵՐ

4. Լիցենզավորված անձը «ԱՂԱՎՆՈ-Կ» ՓՀԷԿ-ում լիցենզավորված գործունեությունն իրականացնում է 2017 թվականին շահագործման հանձնված ՀԱ-1, ՀԱ-2 և ՀԱ-3 հիդրոէներգետիկայի, որոնց դրվածքային հզորությունը կազմում է 2,815 մեգավատտ:

5. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

5. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում իրականացնելու էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրություն, փոխակերպում (տրանսֆորմացիա), առաքում (վաճառք) և դրանց իրականացման համար անհրաժեշտ էներգատեղակայանքների շահագործում՝ սույն Լիցենզիայի պայմաններին համապատասխան:

6. Լիցենզավորված անձը Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք և (կամ) պարտականություն իրավունք չունի պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարելու, զիջելու կամ փոխանցելու մեկ այլ անձի առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու և Լիցենզիայում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու:

6. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից սահմանված իրավական ակտերի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջներին:

8. Լիցենզավորված անձը Լիցենզավորված գործունեությունը պետք է իրականացնի տնտեսական արդյունավետության սկզբունքներին, ստանդարտներին, անվտանգության տեխնիկայի նորմերին և հուսալիության ցուցանիշներին համապատասխան:

9. Լիցենզավորված անձը չպետք է խոչընդոտի կամ փորձի խոչընդոտել այլ լիցենզավորված անձանց՝ Արտադրողի կամ Ներկրողի (Արտահանողի) գործունեությունը և (կամ) մրցակցությունը գործունեության այդ բնագավառներում:

10. Լիցենզավորված անձն իր գործունեությունն իրականացնելիս պարտավոր է ապահովել մարդկանց կյանքի և առողջության անվտանգությունը, ինչպես նաև գույքի

պահպանությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

11. Լիցենզավորված անձն առանց Հանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայտեր կամ միավորվել Լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:

12. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտերն առանց Հանձնաժողովի թույլտվության իրավունք չունի ձեռք բերելու նույն կամ մեկ այլ Լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալու փայամասնակցություն, ինչպես նաև վաճառելու 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր:

13. Լիցենզավորված անձի և Լիցենզիա ունեցող այլ անձանց, ինչպես նաև Սպառողների հետ կնքվող էներգամատակարարման (առուվաճառքի) պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի կողմից սահմանված պայմանագրերի օրինակելի ձևերին:

14. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեություն իրականացնող այլ անձանց միջև կնքվող էներգամատակարարման (առուվաճառքի) պայմանագրերը ենթակա են Հանձնաժողովում գրանցման:

15. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը (շենքեր, շինություններ, կառույցներ, արտադրական հզորություններ, գործող էներգատեղակայանքներ և գծեր) վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու համար Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ համաձայնություն ստանալու նպատակով:

16. Լիցենզավորված անձը Հանձնաժողով է ներկայացնում Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան տեղեկատվություններ և հաշվետվություններ, ինչպես նաև տեղեկատվություններ՝

- 1) բանկերում ունեցած հաշիվների մասին,
- 2) տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կատարված ստուգումների արդյունքների մասին,
- 3) անցած ժամանակաշրջանի գործունեության մասին,
- 4) հաջորդ հաշվարկային ժամանակաշրջանի տեխնիկատնտեսական ցուցանիշների կանխատեսումների մասին,
- 5) երկարաժամկետ և կարճաժամկետ վարկային ծրագրերի մասին,
- 6) տեխնիկական վերակառուցման, վերականգնման և արդիականացման երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի և դրանց իրականացմանն ուղղված ֆինանսական ներդրումների մասին:

Ներկայացված ֆինանսատնտեսական ծրագրերը պետք է հիմնավորված լինեն համապատասխան հաշվարկներով և ենթակա են Հանձնաժողովի հետ համաձայնեցման:

17. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է համապատասխանեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառման պահանջներին (ստանդարտներին) և Հանձնաժողովի սահմանած ձևերին:

18. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է առանձնացված լինեն Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից և հաշվետվությունից:

19. Լիցենզավորված անձը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 30-ը, հանրապետական մամուլում հրապարակել նախորդ տարվա իր գործունեության ֆինանսատնտեսական հաշվետվությունը՝ համաձայն Հանձնաժողովի կողմից սահմանված ձևերի: Հրապարակված հաշվետվությունները չպետք է պարունակեն պետական և ծառայողական գաղտնիքներ:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով իրականացնել իր ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտ:

21. Լիցենզավորված անձը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության հաշվետվության և այլ տեղեկատվության հավաստիության համար:

22. Լիցենզիայի գործողության ընթացքում Լիցենզավորված անձն իր նախաձեռնությամբ, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, կարող է հայտ ներկայացնել գործող սակագների վերանայման վերաբերյալ:

23. Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ և իր սահմանած ընթացակարգով կարող է վերանայել գործող սակագները:

24. Լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեության հետ կապված ծախսերն իրականացնում է ըստ սակագնի մեջ ընդգրկված ծախսերի համապատասխան հոդվածների (ուղղությունների)՝ ապահովելով շահագործման հուսալիությունն ու անվտանգությունը: Ծախսերի կառուցվածքի փոփոխության անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը համապատասխան հիմնավորումներով նախապես դիմում է Հանձնաժողով՝ համաձայնեցման համար:

25. Հանձնաժողովը սակագների մեջ հաշվի է առնում միայն այն ծախսերը, որոնք հիմնավորված և անհրաժեշտ են լիցենզավորված գործունեությունն իրականացնելու համար:

26. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել Հաղորդողի, Բաշխողի և Համակարգի օպերատորի օպերատիվ հրահանգները և կարգադրությունները՝ ըստ գործող կարգի և նրանց հետ կնքված պայմանագրի դրույթների:

27. Լիցենզավորված անձը պարտավոր է անմիջապես Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

7. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՄԱՐՈՒՄ

28. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումը Հանձնաժողովն իրականացնում է իր կողմից սահմանված կարգով:

29. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

30. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:

31. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ընկերության ներքին կանոնակարգը, անվտանգության և հակահրդեհային կանոնները, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

8. ՏՈՒՑԺԵՐ

32. Լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում Հանձնաժողովը ղեկավարվում է «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով:

33. Լիցենզավորված անձին Լիցենզիայից զրկելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ:

34. Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա: Մինչև Լիցենզիայի կասեցման կամ զրկման մասին Հանձնաժողովի կողմից համապատասխան որոշում կայացնելը Լիցենզավորված անձը պարտավոր է շարունակել իրականացնել գործունեությունը՝ ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով և համաձայն Լիցենզիայի պայմանների:

35. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության սույն Լիցենզիայի պայմանների 32-րդ կետով սահմանված կարգով, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս-մաժորային հանգամանքների հետևանք են:

9. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԴՐՈՒՑԹՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

36. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

37. Լիցենզավորված անձի իրավական-կազմակերպական ցանկացած փոփոխության դեպքում նա պարտավոր է Լիցենզիայի վերագրանցման կամ նրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու կամ նոր Լիցենզիա ստանալու հայտով անհապաղ դիմել Հանձնաժողով:

38. Լիցենզավորված անձը հնգօրյա ժամկետում ծանուցագրով տեղեկացնում է Հանձնաժողովին իր իրավաբանական հասցեում, հիմնադիր փաստաթղթերում և բանկային հաշվեհամարներում տեղի ունեցած փոփոխությունների մասին:

10. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

39. Լիցենզավորված անձի բաժնետերերի (հիմնադիրների) փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է դիմել Հանձնաժողով՝ սույն Լիցենզիայում անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ կատարելու համար:

40. Լիցենզավորված անձը վթարային և այլ իրավիճակներում, երբ սպառողների էներգամատակարարումը լրիվ կամ մասնակի դադարեցվել է, իսկ էլեկտրական էներգիայի քանակը (հզորությունը) նվազել է, պարտավոր է ձեռնարկել իրենից կախված բոլոր անհրաժեշտ միջոցները էներգամատակարարումը հնարավորինս սեղմ ժամկետներում վերականգնելու համար:

41. Լիցենզավորված անձը պարտավոր է աջակցել Համակարգի օպերատորի կողմից իրականացվող՝ էլեկտրական ցանցի հուսալիությունն ու անվտանգությունն ապահովող՝ Լիցենզավորված անձի սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների գնումներին, օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով ու պայմանագրերով սահմանված կարգով ապահովել այդ սարքերի շահագործումը, կատարել դրանց նորոգման, փոխարինման և այլ անհրաժեշտ աշխատանքներ, ինչպես նաև աջակցել իր տնօրինության տակ գտնվող այլ Անձանց սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների գնման իրականացմանը:

11. ԾԱՆՈՒՑՈՒՄ

42. Լիցենզիայի վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները պետք է լինեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով կամ պատվիրված նամակով: Ցանկացած ծանուցում կամ հաղորդագրություն ուժի մեջ կհամարվի ստացման պահից կամ, եթե այն չի ստացվել հասցեատիրոջ մեղքով, ներկայացման պահից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հոկտեմբերի 2017 թվականի

N 52-Ս

ք. Ստեփանակերտ

**«ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ N 0001
ԹՈՒՑԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի ապրիլի 10-ի «Ջրային համակարգի օգտագործման թույլտվության տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 20Ն որոշումը և «Ջրամատակարարում և ջրահեռացում» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2017 թվականի հոկտեմբերի 10-ին ներկայացված հայտը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է**.

1. Երկարաձգել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2012 թվականի մարտի 5-ի ««Ջրամատակարարում և ջրահեռացում» փակ բաժնետիրական ընկերությանը ջրային համակարգի օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» N 28Ս որոշմամբ տրված N 0001 թույլտվության գործողության ժամկետը՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 25-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հոկտեմբերի 25-ից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

**Լ Ե Ռ Ն Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

Հ Ր Ա Մ Ա Ն

«15» սեպտեմբերի 2017թ.

N 228-Ա

ք.Ստեփանակերտ

**Ա Ն Հ Ա Տ Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ Ա Տ Ե Ր Ա Ի Ղ Ա Բ Ա Լ Ի Կ Յ Ա Ն Ի Ն Դ Ե Ղ Ա Տ Ն Ա Յ Ի Ն
Գ Ո Ր Ծ ՈՒ Ն Ե Ռ Թ Յ Ա Ն Հ Ա Մ Ա Ր Տ Ր Վ Ա Ծ Լ Ի Ց Ե Ն Ջ Ի Ա Յ Ի
ՈՒ Ժ Ը Կ Ո Ր Ց Ր Ա Ծ Ճ Ա Ն Ա Չ Ե Լ ՈՒ Մ Ա Մ Ի Ն**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և անհատ ձեռնարկատեր Աիդա Բալիկյանի դիմումը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել 2008 թվականի մարտի 12-ին դեղատնային գործունեության /դեղատնային կրպակ/ համար անհատ ձեռնարկատեր Աիդա Բալիկյանին տրված թիվ Ա-XX-000059 լիցենզիան:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) Անհատ ձեռնարկատեր Աիդա Բալիկյանի լիցենզիայի բնօրինակը կցել նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Կ.ԱԹԱՅԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ, ԴԱՂԱՐԵՑՎԱԾ ԵՎ ԿԱՍԵՑՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

04.10.2017թ.

h/h	Լիցենզավորված անձի անվանումը կամ անունը, ազգանունը	Լիցենզիայի		Գործունեության		Լիցենզիայի գործողության ժամկետը	Ծանոթություն
		համարը	տրման ամսաթիվը	տեսակը	իրականացման վայրը		
1	2	3	4	5	6	7	8
ՏՐԱՄԱԴՐՈՒՄ							
1	Իսանյան Արա Արամի (ֆիզիկական անձ)	ՏՕՈ00575	13.09.2017թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԼՂՀ	անժամկետ	
2	Իգոր Վաչիկի Ջաքարյանին (ֆիզիկական անձ)	ՏՕՈ00576	13.09.2017թ.		ԼՂՀ	անժամկետ	
3	Սամվել Արմենի Խաչատրյանին (ֆիզիկական անձ)	ՏՕՈ00577	13.09.2017թ.		ԼՂՀ	անժամկետ	
ԴԱՂԱՐԵՑՈՒՄ							
1	Կարեն Էդուարդի Բաղդասարյանի (ֆիզիկական անձ)	ՏՕՈ00506	26.09.2016թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԼՂՀ	անժամկետ	13.09.2017թ.
ԿԱՍԵՑՈՒՄ							
1	ԱԶ Դավիթ Սարգսյան	ՏՕՈ00397	21.07.2014թ.		ԼՂՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 14.09.2017թ.

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
2017 թվականի սեպտեմբեր ամսվա համար

ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն

NN	Ֆիզիկական.անձանց /անուն, ազգանուն/, բնակության վայրը իրավաբանական անձանց /անվանումը/, գտնվելու վայրը	ՀՎՀՀ	Լիցենզ. համար	Լիցենզ. տալու ամսաթ.	Գործողության տեսակը	Գործուն. իրական. վայրը	Գործող. ժամկետ Ը	Պետական տուրքի առաջին վճարման ամսաթիվ Ը	Ծանոթ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	«ԿԱՌՈՒՅՅ» ՍՊԸ ք.Ստեփ. Ս.Դավթի փող, 54/16	90014035	ՇԻ-993	07.09.2017	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	05.09.2017	
2	«ԹԵՐՄՈ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ ք. Ստեփ. Հուրունց փող, տ 17	90040152	ՇԻ-994	07.09.2017	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	06.09.2017	
3			ՔՓՄ-995	07.09.2017	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	06.09.2017	

					<i>արտադրական</i>				
4	«ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԵՂԲԱՅՐ-ՆԵՐ» ՍՊԸ ԼՂՀ Մարտունու շրջան, գ. Ճարտար	90214162	ՇԻ-996	14.09.2017	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	11.09.2017	
5	«ՆՈՐՈԳՇԻՆ» ՍՊԸ ք. Ստեփ. Ազատամարտիկների 1	90024709	ՇԻ-997	14.09.2017	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	13.09.2017	
6	«ԼԵՎ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ ք. Ստեփ. Հեքիմյան փող, շենք 14ա/19	90034752	ՇԻ-998	22.09.2017	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	19.09.2017	
7	«ԷԼԻՏ ՀԻՎՐՈ» ՍՊԸ ք. Ստեփ, Մարոյան փող, շ.8/12	90040437	ՇԻ-999	29.09.2017	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	25.09.2017	
8			ՇԻ-1000	29.09.2017	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	25.09.2017	
9			ՇԻ-1001	29.09.2017	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	25.09.2017	

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
2017 թվականի սեպտեմբեր ամսվա համար

ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն

NN	Լիցենզավորված, թույլտվություն, արտոնագիր ունեցող անձի		Լիցենզիայի սերիան և համարը	Լիցենզավորված գործունեության տեսակը	Լիցենզիայի վերաձևակերպում		Ստացված ցուցիկաթուղային (նշել երկարաձգված ժամանակահատվածի գրանցումը)	Լիցենզիայի, թույլտվության արտոնագրի գործողության կասեցում		
	Անվանումը	ՀՎՀՀ			Միվիժնատարողը	Միվիժնատարողի անվանումը		Մասնավոր դեպքերում	մտային որոշման կամ դեմքի անստացումից հետո	միվիժնատարողի անստացում
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
1	«Պրոգրես» ՍՊԸ ք.Ստեփ., Հեքիմյան 2ա/26	90014336	ՇԻ-065	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>				01.09.2017		
2	«Ստարտ Պլյուս» ՍՊԸ Մարտունու շրջ. գ. Սարգսաշեն	90212476	ՇԻ-485	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				20.09.2017		
3	«ԺԱՌԱՆԳՈՐԴ» ԱԿ ԼՂՀ Ասկերանի շրջ.	90073854	ՇԻ-619	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				07.09.2017		

	գ. Նորագյուղ									
4	«ՖՈՐ ԴԻՐԵԿՇՆՍ» ՍՊԸ ք. Ստեփ. Սասունցի Դավիթ 15	90023576	ՔՓՄ- 681	Քաղաքաշինության փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				30.09.2017		
5	«ՍՏՐՈՅՄՈՆՏԱԺ» ՍՊԸ ք. Ստեփ. Դավիթ Բեկի փող. շենք 3 բն. 1	90033896	ՇԻ- 834	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				20.09.2017		
6	«Ա Կ Ց Ե Ն Տ» ՍՊԸ ք. Ստեփ. Բաղրամյան փող, շենք 1 բն 31	90037279	ՇԻ- 905	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>				17.09.2017		
7	«ՎԵՄ» ՍՊԸ ք. Ստեփ. Ա.Իսակովի փող. N7 շենք	90020389	ՈՏՀ- 908	Որակի տեխնիկական հսկողություն, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				24.09.2017		
8	«ՄԱՎՎԱ» ՓԲԸ ք. Ստեփ, Տիգրան Մեծ փող թիվ 20	90036774	ՇԻ- 947	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				16.09.2017		
9	«Ալեքսեյ Ալեքսանյան» ԱԶ ք. Ստեփ., Արմենավան փողոց, տուն 3	90437389	ՇԻ- 949	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>կապի</i>				30.09.2017		

10	«Վոդոկանալ պրոյեկտ» ԱԿ ք.Ստեփ., փող. Բաղրամյան 4	90002269	ՔՓՓ- 673	Քաղաքաշինության փաստաթղթերի փորձոքանություն, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>					20.08.2017	
11	«ԼԵՎ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ ք.Ստեփ. Հեքիմյան փող. շենք 14ա/19	90034752	ՇԻ- 931	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					11.03.2017	
12			ՇԻ- 937	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>					28.04.2017	
13	«Արգիշտի» ՍՊԸ, ԼՂՀ Քաշաթաղի շրջան, գ. Սուս	10002815	ՇԻ- 832	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>					22.09.2017	
14	«Թիվ 8 համաշինարարա- կան» ԲԲԸ ք. Մարտունի	90212846	ՇԻ- 052	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					24.08.2017	
15	«ԿՈՆՏՐԱԿՏ» ՍՊԸ ք.Ստեփ. Գյուրջան 23ա	90001945	ՇԻ- 331	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					04.10.2016	
16	«ՊԻՐԱՄԻԴԱ» ՍՊԸ ք. Ստեփ. 1-ին Նագորնայա 2	90021418	ՇԻ- 515	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>					26.09.2017	

17	«ԱԶԻՍՈՒՏ» ՍՊԸ ք.Ստեփ. Դուրյանի փող. 3-րդ փկղ. տուն 4	90016134	ԻՀ-246	<i>Ինժեներական հետազննում</i>					28.08.2017	
18	«ՄԱՎՎԱ» ՓԲԸ ք. Ստեփ, Տիգրան Մեծ փող թիվ 20	90036774	ՇԻ- 948	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>						14.09.2017 (դիմում ստ 12.09.2017)
19	«Վերանորոգման, շինա- րարության տնտեսություն» ՓԲԸ ք.Ստեփ. Ենիկոյսովի 3/1	90026704	ՇԻ- 874	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>						14.09.2017 (դիմում ստ 08.09.2017)